## Տնտեսական ապրանքների մատակարարման
## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 04

05.07 .2016թ. ք.Ալավերդի

Անհատ ձեռնարկատեր Արմենակ Մարտիրոսյանը, այսուհետ՝ «Վաճառող» ,որը գործում է իր անունից եւ «ԱԼԱՎԵՐԴՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ , ի դեմս տնօրեն Ռուդոլֆ Ստեփանյանի ՝ այսուհետ «Գնորդ» , որը գործում է համաձայն ՀՀ օրենսդրության , կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1.1Վաճառողը պարտավորվում է գնորդին մատակարարել տնտեսական ապրանքներ այսուհետ՝«Ապրանք», իսկ գնորդը պարտավորվում է գնել ապրանքը և վճարել դրա համար:

### 2.Կողմերի իրավունքները ու պարտականությունները

2.1 Վաճառողն իրավունք ունի .

2.1.1Սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում հրաժարվել պայմանգրի կատարումից:

2.2 Վաճառողը պարտավոր է .

2.2.1 Գնորդին մատակարարել անհրաժեշտ որակի և տեխնիկական պահանջներին համապատասխան Ապրանք: Մատակարարման պարտականությունը համարվում է կատարված Ապրանքը գնորդին հանձնելու պահից:

2.3 Գնորդը իրավունք ունի.

2.3.1 Վաճառողից պահանջել մատակարարված Ապրանքի որակական և տեխնիկական հատկանիշները հաստատող փաստաթղթեր:

2.3.2 Հրաժարվել պայմանգրի կատարումից, եթե վաճառողի կողմից մատակարարված Ապրանքը չի համապատասխանի փաստաթղթերում նշված հատկանիշներին:

2.4 Գնորդը պարտավոր է.

2.4.1 Վաճառողին վճարել սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարի չափով, 3.2 կետում սահմանված ժամկետում:

2.4.2 Ապրանքի որակական և քանակային հատկանիշները ստուգել ապրանքը վաճառողից ընդունելու ժամանակ:

### 3.Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1 Սույն պայմանագրի գինը որոշվում է ըստ յուրաքանչյուր ամսվա ընթացքում մատակարարված ապրանքների քանակի, որի վերաբերյալ վաճառողը կազմում է հաշիվ-ապրանքագիր:

3.2 Գնորդը 3.1 կետում նշված գումարը վճարում է վաճառողին բանկային փոխանցման միջոցով կամ կանխիկ, հաշիվ-ապրանքագիրը ստանալու պահից 30 (երեսուն) օրվա ընթացքում:

3.3 Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է 100.000 (մեկ հարյուր հազար)ՀՀ դրամ: